ՀԱՐՑԱԹԵՐԹ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
առաջին (դպրոցական) փուլի – 2016 թ.
/Տևողությունը 120 րոպե/

10-րդ դասարան

1. ***Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն).***
   1) հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը
   2) երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները
   3) երևույթների բացատրությունները
   4) երևույթների հետևանքների կանխատեսումը:
2. ***Երկու կետերի իրական հեռավորությունը 480 կմ է: Դրանց հեռավորությունը 1:800000 մասշտաբի քարտեզում կլինի.***
   1) 0,6 սմ, 2) 6 սմ, 3) 60 սմ, 4) 600 սմ:
3. ***Ո՞ր պնդումն է ճիշտ.***
   1) արեգակնային համակարգում բոլոր մոլորակներն ունեն աշխարհագրական թաղանթ,
   2) Երկրագնդի առանցքի՝ ուղեծրի հարթության նկատմամբ ունեցած թեքության աստիճանային մեծությունը համապատասխանում է բևեռային շրջագծերի աստիճանային մեծությանը
   3) Արեգակի ճառագայթները նույն պահին, աշխարհագրական տարբեր լայնություններում, ընկնում են միևնույն անկյան տակ
   4) հարավային արևադարձի վրա հունիսի 22-ին Արեգակի ճառագայթները Երկրի մակերևույթի հետ կազմում են ուղիղ անկյուն:
4. ***Արեգակի ճառագայթների անկման անկյունը Կիև քաղաքում (հս.լ. 50^0) հունիսի 22-ին, կեսօրին կազմում է.***
   1) $16,5^0$, 2) 40^0, 3) 50^0, 4) $63,5^0$:
5. ***Արարատ լեռան ստորոտին 850 մ բարձրության վրա մթնոլորտային ճնշումը հավասար է 670 մմ սնդիկի սյան: Մթնոլորտային ճնշումը գագաթին կլինի.***
   1) 90 մմ 2) 240 մմ 3) 363 մմ 4) 430 մմ:
6. ***Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունը ո՞ր շարքում է տրված.***

ա. Բասենի դաշտ	1) Այդտեղ են միախառնվում Արևմտյան և Արևելյան Եփրատները: Դաշտի մեծ մասը զբաղեցնում է Քեբանի խոշոր ջրամբարը:
բ. Երզնկայի դաշտ	2) Արևմտյան Եփրատի վերնագավառում՝ 1800-2000 մ բարձրության վրա, դաշտի հատակը հարթ է, տեղ-տեղ՝ ճահճոտ:
գ. Կարնո դաշտ	3) Զբաղեցնում է համանուն գոգավորության հատակը: Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի հողերով:
դ. Խարբերդի դաշտ	4) Տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքում՝ 1200-1400 մ բարձրության վրա: Լեռնաշխարհի երկրաշարժավտանգ շրջաններից է:

   1) ա -1, բ-3, գ- 2, դ-4
   2) ա-3, բ-4, գ-1, դ-2
   3) ա-1, բ -4, գ- 2, դ- 3
   4) ա-3, բ-4, գ- 2, դ-1
7. ***Ո՞ր պնդումն է սխալ.***
   1) մետաղածուլական համալիրը ՀՀ տնտեսության կառուցվածքում առաջատար դիրք ունի
   2) ՀՀ մետաղածուլության համալիրի բոլոր ենթաճյուղերն ունեն տեխնոլոգիական ավարտուն ցիկլ
   3) Մինչև 1988 թ. Ալավերդու պղնձաձուլարանը տարեկան արտադրում էր 30-40 հազ.տ մաքուր՝ ռաֆինացված պղինձ
   4) Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկն է:

8. *Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ տարածքի մակերեսի նվազման հաջորդականության.*
   1) Հնդկաստան, Ինդոնեզիա, Ճապոնիա, Իրան
   2) Բրազիլիա, Թուրքիա, Իրան, Ֆրանսիա
   3) Ռուսաստան, Չինաստան, Հնդկաստան, ԱՄՆ
   4) Կանադա, Չինաստան, Ավստրալիա, Հնդկաստան:
9. *Ո՞ր շարքում տրված ժողովուրդներն են խոսում տարբեր լեզվախմբերին պատկանող լեզուներով.*
   1) հույները, բուլղարները, ֆիններ,
   2) իսպանացիները, պորտուգալացիները, բրազիլացիները
   3) անգլիացիները, շվեդները, գերմանացիները,
   4) պարսիկները, քրդերը, տաջիկները:
10. *Ո՞ր երևույթն է կոչվում «քիմիական արտադրության արտահանում».*
   1) քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը,
   2) քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը,
   3) զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը,
   4) քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արտադրությունների արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը:
11. *Հիմնականում ներմուծվող հումքի և վառելիքի հիման վրա պողպատ արտադրող երկրներն են.*
   1) Ճապոնիան և Իտալիան,
   2) Չինաստանը և ՌԴ-ն,
   3) Լեհաստանը և Բրազիլիան
   4) ԱՄՆ-ը և Ուկրաինան:
12. *Տրվածներից ո՞րը Մեծ Բրիտանիայի պատմաաշխարհագրական մարզերից չէ.*
   1) Անգլիան, 2) Շոտլանդիան, 3) Իսլանդիան, 4) Ուելսը:
13. *ՀՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման կարևոր նախադրյալ չէր.*
   1) պղնձաձուլության պրոցեսում անջատված գազերը և նյութերը
   2) քիմիական արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկը
   3) սև մետաղների ներմուծումը
   4) բնական գազի ներմուծումը:
14. *ԼՂՀ-ի մասին որ պնդումն է ճիշտ.*
   1) գյուղական բնակչությունն առավել խիտ է երկրի արևմուտքում
   2) բնակեցման հիմնական գոտին տարածվում է 2000-2500 մ բարձրություններում
   3) բնակչության միջին խտությունը 12 մարդ/կմ^2 է
   4) ուրբանիզացման մակարդակը 70 % է:
15. *Ռացիոնալ բնօգտագործման օրինակ է.*
   1) օգտակար հանածոների նոր հանքավայրերի շահագործումը
   2) անտառների հատման միջոցով արոտավայրերի ընդարձակումը
   3) անտառանյութի փոխադրումը խոշոր գետերով
   4) հումքի երկրորդային շահագործումը:
16. *Երկու քաղաքներ գտնվում են հասարակածի վրա: Նրանցից մեկը գտնվում է արլ.ե. 90^0-ի, իսկ մյուսը՝ արմ.ե. 120^0-ի վրա: Որոշել նրանց միջև ամենակարճ հեռավորությունը աստիճանով:*
17. *Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -4^0, իսկ ստորոտին՝ +10^0:*
   Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել 5^0-ով):
18. *Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 60000 կմ է, երկրի տարածքը՝ 15 000 կմ^2: Որոշել տրանսպորտային ցանցի խտությունը:*
19. *Երկրի բնակչության թիվը 20 մլն է, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 300 000: Որոշել ծնելիության գործակիցը ‰-ով:*
20. *Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 4 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 960 մլն տ·կմ: Որքա՞ն կկազմի բեռների փոխադրման միջին հեռավորությունը.*